ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/83

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.04.2021թ. թիվ 26/26-1/4864-2020 գրությամբ «Յունիպովեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Արարատ քաղաքային կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի 25.03.2021թ. թիվ 43 գրության հիման վրա 01.04.2021թ. թիվ 26/26-1/4864-2020 գրությամբ նախաձեռնել է «Յունիպովեր» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Յունիպովեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Յունիպովեր» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/83 ընթացակարգի շրջանակներում 09.04.2021թ. ժամը 10:30-ին և 14.04.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Արարատ քաղաքային կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Արարատ քաղաքային կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.03.2021թ. թիվ 43 գրությամբ հայտնել է, որ «Արարատ քաղաքային կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի կարիքների համար 2021 թվականի փետրվարի 18-ին դիզելային վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից «Յունիպովեր» ՍՊԸ-ն հաղթող մասնակից ճանաչվելուց հետո հրաժարվել է կնքել համապատասխան պայմանագիր:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ ներկայացնում է Ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով պահանջվող փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/83 ընթացակարգի շրջանակներում 09.04.2021թ. ժամը 10:30-ին և 14.04.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/83 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/83 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Արարատ քաղաքային կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի կողմից կազմակերպվել է «ԱՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Յունիպովեր» ՍՊԸ-ն:

2.«Յունիպովեր» ՍՊԸ-ն 22.03.2021թ. էլ. փոստի միջոցով Պատվիրատուին հայտնել է, որ տեխնիկական խնդիրների պատճառով հրաժարվում է պայմանագիր կնքելուց:

3.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.03.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Յունիպովեր» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել պայմանագիրը և 22.03.2021թ. էլեկտրոնային նամակի միջոցով հրաժարվել է պայմանագիրը կնքելու իրավունքից, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը, որոշել է զրկել վերջինիս պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.04.2021թ. թիվ 26/26-1/4864-2020 գրությունը, «Արարատ քաղաքային կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի 25.03.2021թ. թիվ 43 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Արարատ քաղաքային կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի կողմից կազմակերպվել է «ԱՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Յունիպովեր» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Յունիպովեր» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 11.03.2021թ. Ընկերությանը էլ. փոստի միջոցով ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 22.03.2021թ. Ընկերությանը էլ. փոստի միջոցով հայտնել է, որ 24.03.2021թ. լրանում է պայմանագրի կնքման համար օրենքով սահմանված ժամկետը:

Ի պատասխան վերը նշված ծանուցման՝ Ընկերությունը 22.03.2021թ. էլ. փոստի միջոցով Պատվիրատուին հայտնել է, որ տեխնիկական խնդիրների պատճառով հրաժարվում է պայմանագիր կնքելուց:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.03.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Յունիպովեր» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել պայմանագիրը և 22.03.2021թ. էլեկտրոնային նամակի միջոցով հրաժարվել է պայմանագիրը կնքելու իրավունքից, ուստի գնահատող հանձնաժողովը,

հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը, որոշել է զրկել վերջինիս պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:***

Ուսումնասիրելով «Արարատ քաղաքային կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Յունիպովեր» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո՝ 22.03.2021թ., Պատվիրատուին ուղղված գրությամբ հրաժարվել է «ԱՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով պայմանագիրը կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.04.2021թ. թիվ 26/26-1/4864-2020 գրությամբ «Յունիպովեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Յունիպովեր» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**